ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/21535-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-592-23.05.2023-ՖՎ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 675 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-592-23.05.2023-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ նախագծեր) առաջարկվում է կարգավորել խաղային հաշիվներին գումարների մուտքագրման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես, սահմանել, որ՝

1) ինտերնետ շահումով խաղերի դեպքում հատուկ խաղային հաշիվը կարող է համալրվել բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների միջոցով.

2) արգելվում է տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել և ելքագրել կանխիկ եղանակով: Նշված հաշիվները համալրվում են, և հաշիվներից գումարը ելքագրվում է միայն անկանխիկ եղանակով: Տոտալիզատորի մասնակցի հաշիվը կարող է համալրվել բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների միջոցով:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստորև ներկայացնում է հետևյալ դիտարկումներն ու առաջարկությունները՝

I. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ՝

1. Նախագծի 1-ին հոդվածում «բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների» բառերն առաջարկում ենք փոխարինել «բանկային հաշվի և (կամ) վճարային քարտի» բառերով:

Նույն առաջարկությունը վերաբերում է նաև «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածին:

2. Նախագծի 1-ին հոդվածով «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի 2.1-ին մասում լրացվող «դ1» կետը համահունչ չէ 2.1-ին մասի մյուս կետերի բովանդակության հետ՝ հաշվի առնելով այն, որ քննարկվող մասով սահմանվում են ինտերնետ շահումով խաղերի գործունեության կազմակերպչի գործառույթները (պարտականությունները), մինչդեռ, լրացվող «դ1» կետը

սահմանում է հատուկ խաղային հաշվի համալրման եղանակը: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ հատուկ խաղային հաշիվը կարող է համալրվել բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների միջոցով: Այս կապակցությամբ հարկ է ուշադրություն հրավիրել նաև քննարկվող օրենքի 6-րդ հոդվածի 2.2-րդ կետի ձևակերպմանը, որի համաձայն օրենքով սահմանված անկանխիկ գործարքները պետք է իրականացվեն միայն բանկային հաշիվների կամ քարտերի միջոցով: Բացի այդ, հարկ է հաշվի առնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Նշվածից ելնելով՝ առաջարկվում է քննարկվող օրենքի 6-րդ հոդվածի 2.1-ին մասում «դ1» կետը լրացնելու փոխարեն նույն մասի «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) ինտերնետ շահումով խաղի կազմակերպչի սերվերում ստեղծում է յուրաքանչյուր խաղացողի համար հատուկ խաղային հաշիվ, որը կարող է համալրվել բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային հաշիվների կամ քարտերի միջոցով.»:

Սույն առաջարկի ընդունման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա վերանայելու նախագծի վերնագիրը և նախագծի 1-ին հոդվածում «2.1-ին մասը լրացնել «դ1» կետով և» բառերը փոխարինել «2.1-ին մասի «դ» կետը» բառերով:

3. Նախագծի 1-ին հոդվածում օգտագործվող «(այսուհետ՝ օրենք)» բառերն առաջարկում ենք հանել, իսկ 2-րդ հոդվածում օգտագործվող «Օրենք» բառը գրել փոքրատառերով:

Նույն դիտարկումը վերաբերում է նաև «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածին:

4. Նախագծով առաջարկվող փոփոխությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է փոփոխություն կատարել «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ՝ «Սույն օրենքի խախտումները, դրանց համար կիրառվող պատասխանատվության միջոցները» գլխում՝ սահմանելով համապատասխան պատժամիջոց:

5. Նախագծի տրամաբանության շրջանակում առաջարկում ենք օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետի 2-րդ նախադասությունը «եղանակով» բառից հետո լրացնել «, բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների միջոցով» բառերով:

II. «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ՝

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է փոփոխություն կատարել «Վիճակախաղերի մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մասում (մասն առաջարկվել է շարադրել նոր խմբագրությամբ), այսինքն, քննարկվող նախագծով որևէ լրացում չի առաջարկվում: Հետևաբար, առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմամբ (նորմատիվ իրավական ակտն ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը)՝ անհրաժեշտ է քննարկվող նախագծի վերնագիրը համապատասխանեցնել նախագծի բովանդակությանը:

2. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասի 3-րդ նախադասությունն ունի հետևյալ ձևակերպումը. «Տոտալիզատորի մասնակցի հաշիվը կարող է համալրվել բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների միջոցով:»: Մինչդեռ, հարկ է նկատել, որ «Վիճակախաղերի մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված անկանխիկ գործարքները պետք է իրականացվեն միայն բանկային հաշիվների կամ քարտերի միջոցով: Նշվածից ելնելով՝ օրենքում օգտագործվող տերմինների միատեսակությունն ապահովելու նկատառումից ելնելով՝ առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասի 3-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տոտալիզատորի մասնակցի հաշիվը կարող է համալրվել բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային հաշիվների կամ քարտերի միջոցով:»:

3. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող՝ «Վիճակախաղերի մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մասը բաղկացած է երկու պարբերություններից, որոնցից երկրորդը համարակալված չէ, մինչդեռ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:

Ամփոփելով վերոգրյալը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, կարևորելով հիմնավորման մեջ ներկայացված նպատակները, առաջարկում է նախագծերը լրամշակել՝ ներկայացված առաջարկություններին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 675 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՅՑՈՒ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-592-23.05.2023-ԳՎ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-592-23.05.2023-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2.1-ին մասը լրացնել «դ1» կետով եւ շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«դ1) Հատուկ խաղային հաշիվը կարող է համալրվել բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների միջոցով.»:

Հոդված 2. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-592'-23.05.2023-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի 5.2րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2.Արգելվում է տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել եւ ելքագրել կանխիկ եղանակով: Նշված հաշիվները համալրվում են, եւ հաշիվներից գումարը ելքագրվում է միայն անկանխիկ եղանակով: Տոտալիզատորի մասնակցի հաշիվը կարող է համալրվել բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների միջոցով:

Անմիջականորեն (խաղասրահի միջոցով) խաղացողների կողմից կատարվող խաղադրույքների կատարումը կամ կազմակերպիչների կողմից խաղացողներին տրված անհատական խաղային քարտերին դրամական միջոցների համալրումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ բացառապես տվյալ խաղացողին պատկանող բանկային (այդ թվում՝ քարտային) հաշիվների միջոցով:» :

Հոդված 2. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը , իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Այսօր, անկախ սոցիալական կարգավիճակից, հասարակության մի զգալի հատված շարունակում է մեծացնել համացանցի միջոցով իրականացվող շահումով խաղերին իր մասնակցությունը՝ ավելի սրելով ոչ միայն իրենց սոցիալական խնդիրները, այլեւ պետության համար առաջացնելով եւ՛ տնտեսական, եւ՛ ընդհուպ մինչեւ անվտանգային խնդիրներ, քանի որ մեր կարծիքով, շահումով խաղերի հանրային օգուտը շատ ավելի քիչ է, քան պատճառած բարոյական եւ նյութական հանրային վնասը: Կարգավորման ընդունման հրատապությունը պայմանավորված է մտահոգիչ ցուցանիշների ահագնացող աճով: Մասնավորապես, ՀՀ ՊԵԿ-ի եւ Ֆինանսների նախարարության կողմի տրամադրված տեղեկատվության համաձայն՝ մասնակիցների կողմից գնված միավոր խաղերի ընդհանուր գումարը 2020թ-ին եղել է մոտ 2 տրլն. ՀՀ դրամ , 2021թ-ին՝ ավելի քան 3,9 տրլն. ՀՀ դրամ, իսկ 2022թ-ին ավելացել է՝ հասնելով 5,8 տրլն. ՀՀ դրամի, իսկ խաղային հաշիվների ընդհանուր թիվը 2020թ-ին եղել է մոտ 2,4 մլն., 2021թ-ին՝ ավելի քան 5,8 մլն., իսկ 2022թ-ին ավելացել է՝ հասնելով 8,7 մլն խաղային հաշվի, որոնցում բնականաբար մեծ է թիվ են կազմում ՀՀ քաղաքացիները, որոնց մի մասը կարծում ենք հանդիսանում են սոցիալապես անապահով խավի մարդիկ:

Փաստելով վերոգրյալը, անհրաժեշտ ենք համարում սահմանափակող եւ կարգավորող նախաձեռնության հնարավորության ունենալը, որի միջոցով հնարավոր կլինի ավելի արդյունավետ պայքարել խաղամոլության աճի դեմ եւ պաշտպանել սպառողների շահերը: Ներկա կարգավորումներով օրենքը հնարավորություն է տալիս խաղացողներին իրենց խաղային հաշվին կցել այլ բանկային այդ (թվում քարտային) հաշիվ եւ դրա միջոցով օգտագործել, խաղադրույքներ կատարել ոչ միայն իրենց պատկանող միջոցներից, այլեւ ցանկացած այլ անձի պատկանող հաշիվների միջոցով, այդ թվում իր ընտանիքի անդամների կամ երրորդ անձանց միջոցով: Նախագծի ընդունումը նախ եւ առաջ միտված է սրան, որպեսզի յուրաքանչյուր խաղացող կատարի խաղադրույք միայն իր խաղային հաշվից եւ իրեն պատկանող հաշվի միջոցներից, սրանով էլ ավելի վերահսկելի դարձնելով իր վարքագիծը: Մյուս կողմից խաղացողները, ովքեր չունեն սեփական բանկային հաշիվներ կամ իրենց պատկանող հաշիվների վրա կիրառված են արգելանքներ կամ հանդիպում են այլ խոչընդոտների բանկային գործառնությունների իրականացման իմաստով, շատ ավելի մեծ սահմանափակումների առաջ կկանգնեն խաղադրույքներ կատարելու ժամանակ:

2.Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝ սոցիալապես անապահով խավերի շահերի պաշտպանություն եւ խաղամոլությամբ տարված մարդկանց համար խաղադրույք կատարելու լրացուցիչ խոչընդոտների սահմանում, որը զերծ կպահի հասարակության խոցելի խմբերին մոլեխաղերով հրապուրվելու անկանխատեսելի հետեւանքներից՝ կանխարգելելով սպառնալիքներով հղի իրենց գործունեության ծավալումը, ինչպես նաեւ սպառողների շահերի՝ հնարավոր եւ միտումնավոր խարդախություններից զերծ պահելն ու շահումով խաղերի կազմակերպիչների՝ խաղային իրական ակտիվության չափանիշի արդյունավետ կառավարումը: Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կարգավորել եւ ապահովել օրենքով սահմանված պահանջների հետ կապված հարաբերությունները: